

սերտ կապ ունէր Իրանի սերտ կապ ունէր Իրանի հետ:

Ընթերցողին ենք թողնում, որ մեր ընդգծած, նշանած (0) և փակագծի մէջ առնուած տարբերութիւնները լաւ համեմատէ և այնպէս գաղափար կազմէ արեւելեան և արեւմտեան բարբառների արդի վիճակի մասին: Մեր կարծիքն այն է, որ արեւմտեան արեւելեանին դեռ ևս շատ բան կարող է ուսուցանել, և ոչ թէ ինքն է կարօտ մեղանից խրատուելու:

Ս. Ս.



ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ, ԴՊՐՈՅ .

և

ԱՇԽԱՏԱՆՈՐ ԵՂԱՅԵՐՈՒԹԻՒՆ.



Այս երկրաւոր կեանքում մարդկային ազգի երջանկութիւնը գտնել՝ շատ հին ժամանակներից գրաւել է մտածող մարդոց ուշադրութիւնը: Այդ նիւթի վերայ կազմուել են շատ շատ տեսութիւններ, առաջարկուել կեանքի նոր կազմակերպութիւն, ընկերական յարաբերութեանց բոլորովին նոր կանոններ՝ սկսելով առասպելական Բիւրասպաներից մինչ Պղատոն և մինչև նորագոյն ժամանակների „Contra-social“ ները (Ռուսոս) և ընկերավարական ծրագիրները, այդ խնդիրը իւր ոյժը չի կորցրել և այժմ:

Ազատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն՝ օրէնքներ կազմողների առաջնորդող սկզբունքներն են այժմ, որոնք, ինչպէս ամէն մի քրիստոնեայ գիտէ՝ նաև աւետարանի արծարծած և յառաջ քաշած գաղափարներն են և դէպի բաղդաւորութիւն տանող առաջին քայլերը: Բայց բաւական չէ գեղեցիկ սկզբունքներ ունենալ. ներկայում ամէնքի համար պարզ է, որ երջանկութեան հիմնաքարը պէտք է փնտռել հասարակութեան կազմակերպութեան մէջ. միայն այս կէտում այդ խնդրով զբաղուողները երկու բանակի են բաժանուում:

Ոմանց համար մարդ բաղդաւորութեան կարող է հասնել քրիստոնեական սկզբունքների վերայ հիմնած անդրդուելի հաւատով: Ուրիշները ձգտում են իրերի զրութիւնից, կամ բնութեան երևոյթներից հանել բաղդաւորութեան, երջանկութեան օրէնքներ: Որքան էլ տարբեր և իրար տրամադծօրէն հակառակ լինէին նրանց հայեացքները, սակայն մի

բան պարզ է, որ այժմ մարդիկ հաւասարապէս հաւատացած են, թէ կարելի է այս աշխարհի վերայ երջանիկ և բաղդաւոր ապրել, թէև դէպի բաղդաւորութիւն տանող ճանապարհները տարբեր են:

Մի անգամ կարելի համարելուց յետոյ, երկու կողմից էլ պահանջում են համոզմունք և հպատակութիւն առաջարկուած օրէնքներին: Առաջինների համար շարժող գաղափարը, հիմնական օրէնքը սեռն է. առանց սիրոյ կեանք և կենդանութիւն չկայ. նա պիտի ոգևորէ, ամէն անհատի կեանքին բովանդակութիւն և եռանդ մատակարարէ: Այս վարդապետութեան հակառակորդները պնդում են, որ անհրաժեշտութեան օրէնքն աւելի զօրեղ է, աւելի պինդ է կապում համայնքի անդամներին իրար հետ: Բայց չմոռանանք, որ անհրաժեշտութեան օրէնքը հարկադիր ստիպմունք է, ազատութեան բացակայութիւն, այն ինչ սէրը ծընունդ է մեր յօժար և ազատ կամաց, ճիշդ է, որ համայնքի ամէն անդամ պիտի տանէ ընդհանուր ծանրութեան մի մասը, բայց բնուր թեթեւեամբ է, երբ շարժողը սէրն է: Փոքր ծանրութիւն չէ մօր համար նորածին մանկան խնամքը, սակայն ո՞վ կարող է ասել, թէ դա մօր համար բեռն է: Քրիստոնեական վարդապետութեան այս խորին և հիմնական ճշմարտութիւնը միացնում, կենդանացնում, ոյժ և եռանդ է աղգում՝ առանց որոյ ոչ մի ընկերութիւն կամ համայնք չէր կարող ապրել. սակայն ինչպէ՞ս տնկել այդ առաքինութիւնը սրտների մէջ:

Մարդուս միտքը մշակել, գիտութիւններով հարստացնել, մի առանձին դժուարութիւն չի յարուցանում, և ժամանակի գործ է այդ, Բայց ըզգացմունքի և հոգու մշակութիւնը մեծ ջանք, համբերութիւն և անդուլ եռանդ է պահանջում: Շատ դժուարին գործ է մարդուս մէջ պատուաստել բարոյական գաղափարներ՝ հիմնուած սիրոյ վերայ. առաւել ևս դժուար է այդ սէրը և բարոյական զգացմունքները ի գործ մղող սովորութիւն դարձնել: Մանաւանդ որ բնութիւնը մեր մէջ տնկել է եսականութեան և ինքնապաշտպանութեան ընազգումները, որոնք երբէք չեն ոչնչանում և հզօր հակառակորդներ են սիրոյ դէմ: Ուրեմն որքան մեծ ջանք պիտի գործ դնէ մարդ, որ սէրը գերակշռող զգացմունք դարձնէ: Հարկաւ մանկավարժութիւնը յիշեալ հակառակութիւնը անշնչեմ է չի համարում, այլ նոյն խի հաւատացնում է մեզ, որ կարելի է բոլորովին խեղդել եսական մրցումները և ազատ ասպարէզ տալ սիրոյ զարգացման, սակայն մեր դպրոցները ցարդ իրր իդեալ են ընդունել այդ, և երբէք նորա իրականացման համար առանձին ուշադրութիւն և ջանք գործ չեն դրել, թէ հասարակութեան և թէ գրականութեան

մէջ վաղուց է ընդհանրացել այն կարծիքը, որ դպրոցները միայն միտքն են զարգացնում, իսկ սիրտը թողնում են անմշակ կամ համարեա՝ անմշակ։ Այս պակասը լրացնելու համար առաջարկել են շատ ծրագիրներ, նորանոր փորձեր, Փորձերից մինն է և այն դպրոցը, որի նկարագիրը պիտի անենք և որը առիթ տուեց յիշեալ խորհրդածութիւններն անելու։

Նկիւղայոս Նեպլիւնն ծագմամբ աղնուական, շատ ճանապարհորդած, պետական ծառայութեան պաշտօնների մէջ եղած, իւր կենըրում շատ բան զիտած ու լաւ կրթութեան տէր մի ուսն՝ բաց է արել մի դպրոց, որ ահա տասը տարուց ի վեր գրաւել է ոչ միայն ուսն հասարակութեան, այլ և արեւմտեան գիտնականների ուշադրութիւնը։ Դպրոցի նպատակն է այնպէս կրթել մանուկներին, որ ի վերջոյ նոքա հասնեն երջանիւքեան, առաջնորդուող անգաւառական սիրոյ վարդապետութեամբ։

Դպրոցի հիմնարկելուն պատճառ՝ հետեւեալն է պատմում ինքը՝ Ն. Նեպլիւնը. «մանուկ հասակիցս սուրբ գրքի ընթերցանութիւնը մեծ զուարճութիւն էր պատճառում և տղայութիւնից ես սովորութիւն էի արել ամենայն օր Ս. գիրքը կարդալ։ Սակայն որքան ես խորասուզուում էի Փրկչի խօսքերի մէջ, այնքան ինձ զարհուրեցնում էր կեանքի և աւետարանի մէջ եղած վիճը։ Կեանքի փորձերը գնալով հաստատեցին իմ մէջ այն կարծիքը, թէ մարդկութեան մի մեծ մասը չի իմանում կամ լաւ ևս ասել՝ չի ցանկանում իւր քրիստոնեայ մտածել, կամ զգալ։ Կեանքը ինձ չարութեանց, յանցանքի և սառն ետական հաշիւների մի շղթայ էր ներկայանում . . . : Գնալով իմ մէջ համոզում դարձաւ, որ ես պէտք է հետանամ այդ կարգի մարդկանցից և մտնեմ խեղճ ժողովրդի խղճագոյն մանուկների շրջանը, որոնց ես պէտք կարող եմ գալ։ Նոցա բաւական է որ սովորեցնեմ իւր քրիստոնեայ մտածել և զգալ, որ նոցա կոյր հաւատը գիտակցական դառնայ և կարելի լինի ապրել նոցա հետ Քրիստոսի պատուիրանին համաձայն։ Ես վճռեցի սկսել գիւղական մանկանց կրթութեամբ և աշխատեցի նոցա մէջ գիտակցական հաւատ և սէր զարթեցնել դէպի մարդկութեան Փրկիչը և նորա քարոզած ճշմարտութիւնները։

Թէ և ինքը կալուածատէր և ազգեցիկ անձն, սակայն գործը սկզբում մեծամեծ արգելքների է հանդիպել, Իւր իսկ մտերիները և մերձաւորները կասկածով և թերահաւատութեամբ են վերաբերւել։ Բայց զրանք երկրորդական բաներ են համեմատելով այն հարցի հետ, թէ ո՞րտեղից ծարել իւր նպատակին յարմար ուսուցիչներ, վստահութիւն ներշնչել շրջապատողների մէջ և ցրել նոցա կասկածը, գործին ծառայեցնել . . . Առաջին անգամ բացուում է գիւղատնտեսական արական դպրոց,

որ այժմ 70 աշակերտ ունի և ուր ամէն տարի քննութեամբ ընտրուում և ընդունուում են 18 աշակերտ, գլխաւորապէս չքաւորներից, թէ և ցանկացողների թիւը տարեցտարի շատանում է։ Տասը տարի յետոյ բացուում է և իգական գիւղատնտեսական դպրոց, որի ղեկավարութիւնը յանձն է առել Ն. Ն. ի քայլը, որ մի կրթութեամբ, իւր եղբոր գաղափարներով ոգևորուած տիկին է։ Ականատեսների վկայութեամբ՝ կրթութեան մի այլ եղանակ, աշակերտների սրտաշարժ յարարութիւն, պատիժների կատարեալ բացակայութիւն յիշեալ դպրոցների բնորոշ նկարագիրն են կազմում։ Դպրոցների գլխաւոր նպատակն է կրթել աշակերտներին Փրկչի վարդապետութեան հոգով և վարժեցնել նոցա աշխատանքի։

Գալով նախ կրթութեան եղանակին՝ հանդիպում ենք մի բոլորովին նոր երևոյթի—եղբայրական ակումբներ՝ մեծերի և փոքրների համար, Երբ մանուկը դպրոց է ընդունուում, աշխատում են ամենից առաջ զարթեցնել նորա մէջ հոգևոր ինքնագործունեութեան կարիք։ Մանկան հոգուն մատչելի խօսքերով ու եղանակով բացատրում են, որ նա ստեղծուած է Տիրոջ պատկերով, որ խոհականութիւն, սէր և ընդհանրապէս կատարելութիւն հոգուն յատուկ են՝ կենանքի գլխաւոր խորհուրդն է մեր սիրտը և հոգին Աստուծոյ արքայութեան համար պատրաստել, Յիշեալ կէտերը պարզելը և նրանց մէջ արմատացնելը թէ՛ ուսուցիչների և թէ՛ «մեծ ակմբի» անդամների գործն է։ Էնց որ նկատուում է նորեկի մէջ յիշեալ սերմերի արմատ արձակելը, ընդունում են «փոքր ակմբի» անդամ։ Մեծ հանդիսով կատարուում է անդամի ընդունելութեան արարողութիւնը, որի համար յատուկ կարգ է սահմանուած և կատարուում է եկեղեցում։

Երբ կրտսեր ակմբի անդամը հաստատուում է բարութեան, գիտակցական հաւատքի մէջ, երբ նորա համար համոզմունք են դառնում հաւատոյ կէտերը՝ նա ընդունուում է երէց եղբայրների ակումբը, որոնք բացի փոխադարձ այցելութիւնից պարտական են և փոքր եղբայրներին խնամել և նոցա վերայ հսկել։ Սովորաբար մեծ ակմբի ամէն անգամ ունի իւր խնամոց յանձնուած մի քանի կրտսեր եղբայրներ, որոնց և ամենալաւ ընկերն է։ Մեծերը շարունակ փոքրների հետ են լինում, թէ՛ ճաշի, թէ՛ զրօսանքի, թէ՛ սերտողութեան ժամանակ։ Կարձեալ մեծերի պարտքն է գրել կրտսերների մանրամասն կենսագրութիւնը և կարգալ ժողովների ժամանակ, որ տեղի է ունենում շաբաթը մի անգամ։ Այս ժողովները ևս երկրորդ նորութիւնն են յիշեալ կրթութեան եղանակի, այդտեղ կարգացուում է փոքրների կենսագրութիւնը, գործերը և քննում։ ապա նշանաւոր հեղինակներից ընտիր հատուածներ ընթանացի ասում են կամ կարդում, երգում են, կրթչտութիւն լսում և կամ երբեմն Ն. Ն. իւր

Ճանապարհորդութիւններէց մի հետաքրքրական և կրթիչ բան է պատմում:

Երէց անդամները մեծ ազդեցութիւն ունին թէ՛ դպրոցի յառաջդիմութեան և թէ՛ փոքրների բարքի վերայ: Թէև նոցա ոչ մի արտօնութիւն կամ իրաւունք չէ վերապահուած: Դպրոցի երրորդ նորութիւնը կարգ և կանոն պահպանելու եղանակն է: Ամեն մի դասարանից (Թուով հինգ) նոյն իսկ աշակերտների ձեռքով ընտրուում է մի աւագ որ և պատասխանատու է ընկերների կողմից և իրաւունք ունի իւր ընկերներից պահանջել անպայման հնազանդութիւն դպրոցում տիրող կարգերին: Կրթութեան եղանակի չորրորդ նորութիւնը «շրջան» կոչուած ժողովներն են:

Երկու շաբաթը մի անգամ սովորաբար շաբաթ օրերը ժողովուում են ուսուցիչները և աշակերտներն ի միասին: Ժողովի կառավարիչը ինքը նեպոլիւն է: Ժողովը զուտ ընտանեկան բնաւորութիւն է կրում: Ժողովի խնդիրն է դպրոցի անցեալ երկու շաբաթուայ կեանքը: Նիստը բացուում է օրագիր յիշատակարանի ընթերցմամբ: Եւ նշանակուած են օրապահի ձեռքով այդ շաբաթուայ մէջ կատարուած բոլոր գէպքերը: Նախորդ ժողովի խօսակցութեանց նիւթը: «Ընկերական խորհուրդներէ» վերջապէս զրուցատրութեանց նիւթը: Այդ յիշատակարանի մէջ արձանագրուած է լինում դպրոցների հոգաբարձուի ուսուցիչների աւագների գիտողութիւնները: այնպէս որ այդ յիշատակարանը մի կատարեալ քերտնիկն է: «Դպրոցների յիշատակարանին մենք մեծ նշանակութիւն ենք տալիս: ասել է ուսուցիչներից մէկը մի ճանապարհորդի որովհետև նա մեզ առիթ է ներկայացնում մի անգամ ևս վայելել այն պայծառ և ուրախ բոպէները: երբ յուզուել են մեր սրտերը: տեսնել և այն շարիքը: որ անցել է մեր գլխով... վերջապէս այս առթիւ աշակերտները սովորում են լաւ և կանոնաւոր միտք արտայայտել և գիտել ու նկարագրել ինչ որ կատարուում է դպրոցում»: Այս խնդիրներից յետոյ կարգացում է և «յանցաւորների գիրքը»: Որովհետև դպրոցում ոչ մի պատիժ չկայ: ուստի ընդհանուրի համակրութիւնը կամ հակակրութիւնը միակ զրգիլն է յանցաւորներին ուղղութեան գալու: հէնց այդ պատճառով էլ հրապարակ է հանուում մէն զանցաւորութիւն և հասարակաց դատաստանին ենթարկուում: որ՝ ըստ վկայութեան դպրոցին մօտից ծանօթների: մեծապէս ազդում է յանցաւորի վերայ:

Ինքնակրթութեան մի այլ միջոց է «ընկերական խորհուրդը»: ուր աշակերտները իրենց զխի կատարեալ տէրերն են: Հինգերորդ դաստան աւագը նախագահում է: ոչ մի ուսուցիչ կամ կողմնակի անձն նրանց չի խանգարում: խորհրդի նիւթը իրենց օրական կեանքում բարձրացած հարցերն են: Որովհետև շաբաթ օրերն են թէ՛ խորհուրդները: և

թէ՛ «ժողովները»: այլ և ամէն շաբաթ բազմաթիւն գնում: ուստի այդ օրերը դաս չկայ: Կիրակի օրերը նշանակուած է զրուցատրութիւն: (ընդհանուր կամ մասնաւոր): Սա զուտ կրօնական ժողով է: որ կամ ն. ն. ը: կամ ուսուցիչներից մինը բացատրում է աւետարանից մի բարոյական խնդիր: ներկայ գտնուողներից ամէն ոք իրաւունք ունի հակաձայնել կամ բացատրութիւն պահանջել իւր համար մութ մնացած մի կէտի նկատմամբ: «Մասնաւորները» (զրուցատրութիւն) լինում են դասարանում ուսուցիչների ձեռքով: որոնց համար մշակուած ծրագիր և բնարաններ կան: Ա. դասարանի համար՝ աղօթքի բացատրութիւն: Բ. համար քրիստոնէական աշխարհայեցողութիւն: Գ. քրիստոնէական դաշնակցութիւն: Դ. զանազան քարոզիչների յատկապէս Բերսիէի՝ քննադատութիւն: վերջապէս Ե. համար «աշխատաւոր եղբայրութեան նշանակութիւնը»: որի նպատակն է նախապատրաստել ունկրնդիրներին յիշեալ աշխատաւոր եղբայրութեան անդամակցելու:

Ս. Յ.



ՀՐԷԻՅ ՈՒՍՈՒՄԵ ՈՒ ԴԱՍԻՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԳԵՐԲԱՆԵՒԱՅՈՒՄ.

Դերմանիայում արդէն Կարլոս մեծի ժամանակից և առաջ ևս հրէայք զաղծած են համարվում: և այդքան հնազոյն զարերից նոցա ուսուցման կողմակերպութեան մասին տեղեկութիւններ են հասել մեզ: որոնք մասամբ յիշեցնում են նաև մեր հին հայոց ուսուցման կազմութիւնը:

Նոցա տարրական ուսուցումը հնազոյն ժամանակներում այսպէս է եղել:

Հինդ կամ 6 տարեկան հասակի մանչ — տղային ուսման էին ընծայում մեծ հանդիսով Պենտեկոստէի կամ յայտնութեան տօնի ժամանակ: Զարդարուն պատմութեան հաղցրած: նորան տանում էին Աստուծոյ տաճարը և կանգնեցնում էին հնգամասանի զրքակալի առաջ: ուր որ պիտի կարդացուէր աւուր պատշաճի ընթերցուածքը (տասնարանեայ պատգամը): Ապա յանձնում էին վարժապետին: որ և զգուած տանում էր նորընծային և նստեցնում էր ուսման: վարժապետը առնում էր մի տախտակ (հայոց մէջ թաթ